

10.09. 2001թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Հ. Պետրոսյան, Յու. Պողոսյան, Վ. Դավթյան (խորհրդի անդամներ), Ա. Հարությունյան (խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝ Ն. Մուշեղյան (Ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկեթինգի բաժնի պետ), Ա. Սարգսյան (Տեխնիկական նախագծերի մշակման բաժնի պետ) Ա. Սաֆյանը (Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Ա. Հայրապետյան (ՀՀ ԱՎԾ նախագահի աշխատակազմի ղեկավար), Ա. Շաքոյան (Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ), Թ. Առաքելովա (Տեխնիկական նախագծերի մշակման բաժնի պետի տեղակալ), Ա. Գյուլբենկյան (Սեբենայական ծրագրերի և տեխնոլոգիայի բաժնի առաջատար մասնագետ), Գ. Գյուրջյան (Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ)

Օրակարգի նախագծում՝ տաս հարց.

1. Զբաղմունքների մոդելային բառարանը հաստատելու մասին.
/Զեկուցող՝ Ա. Սարգսյան/
2. Ազգությունների կոդավորման ձեռնարկը հաստատելու մասին.
/Զեկուցող՝ Ա. Սարգսյան/
3. Լեզուների կոդավորման ձեռնարկը հաստատելու մասին.
/Զեկուցող՝ Ա. Սարգսյան/
4. Երկրների անունների /ՀԳ 002-99 S69/ դասակարգչին հավանություն տալու մասին.
/Զեկուցող՝ Ա. Սարգսյան/
5. Վարչատարածքային բաժանման միավորների /ՀԳ 003-2000/ դասակարգչին հավանություն տալու մասին.
/Զեկուցող՝ Ա. Սարգսյան/
6. Տնտեսական գործունեության տեսակների /ՀԳ 005.1-2001/ դասակարգչին հավանություն տալու մասին.
/Զեկուցող՝ Ա. Սարգսյան/
7. “ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վիճակագրության վարչությունների 2000 թվականի ընթացքում կատարած ամփոփ աշխատանքների արդյունքին” հավանություն տալու մասին.
/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/
8. “Էներգիա արտադրող և սպառող կազմակերպությունների /ձև-էներգետիկա/ ընտրանքային հետազոտության անցկացման հարցաթերթը” և դրա լրացման մասին Հրահանգը հաստատելու մասին.
/Զեկուցող՝ Գ. Անանյան/
9. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

9.1 Հաշվետվություն 2001թ. մայիսի 21-ից հունիսի 29-ը Վաշինգտոնում /ԱՄՆ/ կազմակերպված “Զբաղվածության և գործազրկության գնահատում” ուսումնական դասընթացին մասնակցության վերաբերյալ

9.2 Հաշվետվություն 2001թ հուլիսի 16-ից օգոստոսի 3-ը ԱՄՆ-ի Առևտրի դեպարտամենտի Հաշվառումների բյուրոյի միջազգային ծրագրերի կենտրոնի կողմից կազմակերպված “Նոր հազարամյակում տվյալների տարածման արդյունավետ համակարգեր” թեմայով դասընթացի վերաբերյալ

/Ներկայացնող՝ Թ. Առաքելովա, Ա. Գյուլբենկյան/

10. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը: Խորհրդի 10.09.01թ. նիստի օրակարգի նախագիծը հաստատվեց միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. Զբաղմունքների մոդելային բառարանը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Ա. Մարգարյան/

Նշվեց, որ Զբաղմունքների մոդելային բառարանը լրամշակվել է ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից և նախատեսված է մարդահամարների անցկացման համար: Նշված փաստաթուղթը թարգմանվել է հայերեն, որն էլ ներկայացվում է Խորհրդի քննարկմանը:

Գիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան - կողավորման մեջ առաջին խումբը բնորոշող թիվը փոքրացնել,

- առավել նպատակահարմար է ներկայացված փաստաթղթին հավանություն տալ, քանի որ վերջինս արդեն իսկ հաստատվել է ԱՊՀ Վիճ. կոմիտեի կողմից,

Գ. Անանյան - բառարանում “ձեռնարկություններ” բառը փոխարինել “կազմակերպություններ” բառով,

Գ. Գյուրջյան - բառարանի վրա նշել, որ թարգմանությունը ոչ պաշտոնական է, - ճշտել, թե ԱՊՀ վիճ. կոմիտեի որ որոշմամբ է հաստատվել փաստաթուղթը,

Որոշեցին՝

հավանություն տալ ԱՊՀ վիճակագրական կոմիտեի կողմից հաստատված Զբաղմունքների մոդելային բառարանը ՀՀ 2001թվականի մարդահամարի նյութերի մշակման և օգտագործման ժամանակ կիրառելուն:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. Ազգությունների կողավորման ձեռնարկը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Ա. Մարգարյան/

Նշվեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային պրակտիկայում դեռևս չկա Ազգությունների դասակարգիչ, ուստի ՀՀ 2001թվականի մարդահամարի անցկացման և նյութերի մշակման նպատակով Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության

ինստիտուտի կողմից համատեղ մշակվել է Ազգությունների կողավորման ձեռնարկ, որը ներկայացվում է Խորհրդի քննարկմանը:

Առաջարկություններ և դիտողություններ.

Ս. Մնացականյան – ներկայացված ձեռնարկը վերնագրել հետևյալ կերպ. “ՀՀ 2001թվականի մարդահամարի անցկացման և նյութերի մշակման համար Ազգությունների կողավորման ձեռնարկ” /մշակվել է Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ համատեղ/

Որոշեցին՝

հաստատել “ՀՀ 2001թվականի մարդահամարի անցկացման և նյութերի մշակման համար Ազգությունների կողավորման ձեռնարկը” /մշակվել է Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ համատեղ/:

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Լեզուների կողավորման ձեռնարկը հաստատելու մասին.

/Չեկուցող՝ Ա. Մարգարյան/

Նշվեց, որ Խորհրդի նիստին ներկայացված Լեզուների կողավորման ձեռնարկը նույնպես մշակվել է Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից համատեղ և ներկայացվում է Խորհրդի քննարկմանը:

Առաջարկություններ և դիտողություններ.

Ս. Մնացականյան – ներկայացված ձեռնարկը վերնագրել հետևյալ կերպ. “ՀՀ 2001թվականի մարդահամարի անցկացման և նյութերի մշակման համար Լեզուների կողավորման ձեռնարկ” /մշակվել է Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ համատեղ/

Որոշեցին՝

հաստատել “ՀՀ 2001թվականի մարդահամարի անցկացման և նյութերի մշակման համար Լեզուների կողավորման ձեռնարկը” /մշակվել է Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի հետ համատեղ/

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Երկրների անունների /ՀԴ 002-99 Տ69/ դասակարգչին հավանություն տալու մասին.

/Չեկուցող՝ Ա. Մարգարյան/

Նշվեց, որ Խորհրդի նիստին ներկայացված դասակարգչի ընդունվել և գրանցվել է Հայպետստանդարտի կողմից, իսկ այժմ ներկայացվում է Խորհրդի քննարկմանը:

Որոշեցին՝

հավանություն տալ Երկրների անունների /ՀԴ 002-99 Տ69/ դասակարգչի 2001թվականի մարդահամարի նյութերի մշակման նպատակով օգտագործելուն:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Վարչատարածքային բաժանման միավորների /ՀԳ 003-2000/ դասակարգչին հավանություն տալու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Մարգարյան/

Նշվեց, որ Խորհրդի նիստին ներկայացված Վարչատարածքային բաժանման միավորների /ՀԳ 003-2000/դասակարգիչը ևս ընդունվել և գրանցվել է Հայպետստանդարտի կողմից, իսկ այժմ ներկայացվում է Խորհրդի քննարկմանը:

Որոշեցին՝

հավանություն տալ Վարչատարածքային բաժանման միավորների /ՀԳ 003-2000/ դասակարգիչը 2001թվականի մարդահամարի անցկացման և նյութերի մշակման նպատակով օգտագործելուն:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. Տնտեսական գործունեության տեսակների /ՀԳ 005.1-2001/ դասակարգչին հավանություն տալու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Մարգարյան/

Նշվեց, որ Տնտեսական գործունեության տեսակների /ՀԳ 005.1-2001/ դասակարգիչը նույնպես ընդունվել և հաստատվել է Հայպետստանդարտի կողմից, որը ներկայացվում է Խորհրդի նիստի քննարկմանը:

Որոշեցին՝

հավանություն տալ Տնտեսական գործունեության տեսակների /ՀԳ 005.1-2001/ դասակարգիչը 2001թվականի մարդահամարի նյութերի մշակման նպատակով օգտագործելուն:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

7. “ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վիճակագրության վարչությունների 2000 թվականի ընթացքում կատարած ամփոփ աշխատանքների արդյունքին” հավանություն տալու մասին.

/Ձեկուցող՝ Ն. Մուշեղյան/

Նշվեց, որ համաձայն “Պետական վիճակագրության մասին” ՀՀ օրենքի դրույթների, ինչպես նաև “2001-2003թթ. ՀՀ պետական վիճակագրական աշխատանքների Եռամյա ծրագրի” և “2001թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի”, ՀՀ ԱՎԾ ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկեթինգի բաժինն ամփոփել և ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի քննարկմանն է ներկայացնում “ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վիճակագրության վարչությունների 2000 թվականի ընթացքում կատարած ամփոփ աշխատանքների արդյունքը”:

Որոշեցին՝

1. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վիճակագրության վարչությունների 2000 թվականի ընթացքում կատարած ամփոփ աշխատանքների արդյունքն ընդունել ի գիտություն,

2. Վիճակագրության պետական խորհրդի անդամ Հ. Պետրոսյանի, ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ-ծառայության աշխատակազմի ղեկավար Ա. Միմոնյանի ուշադրությունը հրավիրել “ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վիճակագրության վարչությունների 2000 թվականի ընթացքում կատարած ամփոփ աշխատանքների արդյունքի” բովանդակությանը, քննարկման առարկա դարձնել և հետագա տարիների համար մշակել ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների տարեկան հաշվետվությունների օրինակելի տեսք /ֆորմատ/, հաշվի առնելով ինչպես պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի կառուցվածքով մարզային գործակալությունների աշխատանքի արդյունքների ներկայացման /բովանդակման/, այնպես էլ մարզային գործակալությունների կողմից իրականացվող կազմակերպչական, ֆինանսական, կադրային, ուսուցման և այլ գործառնությունների արդյունքների բովանդակություններն արտացոլելու անհրաժեշտությունը,

3. հանձնարարել Ն. Մուշեղյանին մինչև 2001թ. դեկտեմբերի 31-ը նշված փաստաթուղթն ուղարկել մարզային գործակալություններին՝ առաջարկելով վիճակագրական աշխատանքների տարեկան ամփոփ արդյունքները ներկայացնել առաջարկված տեսքով /ֆորմատով/,

4. առաջարկել Վիճակագրության պետական խորհրդի անդամ Հ. Պետրոսյանին մինչև սույն թվականի դեկտեմբերի 10-ը Վիճակագրության պետական խորհրդի նիստում հանդես գալ հաղորդումով՝ նշված հարցի վերաբերյալ:

/արձանագրային/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

8. “Էներգիա արտադրող և սպառող կազմակերպությունների /ձև-էներգետիկա/ ընտրանքային հետազոտության անցկացման հարցաթերթը” և դրա լրացման մասին Հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Գ. Անանյան/

Նշվեց, որ “Էներգիա արտադրող և սպառող կազմակերպությունների /ձև-էներգետիկա/ ընտրանքային հետազոտության անցկացման հարցաթերթը” և դրա լրացման մասին Հրահանգը մշակվել է արտադրված և օգտագործված/սպառված/ էլեկտրաէներգիայի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով, ինչը հետագայում հիմք կհանդիսանա էներգոհաշվեկշռի կազմման համար:

Որոշեցին՝

հաստատել “Էներգիա արտադրող և սպառող կազմակերպությունների /ձև-էներգետիկա/ ընտրանքային հետազոտության անցկացման հարցաթերթը” և դրա լրացման մասին Հրահանգը /կցվում է/:

/Զվեարկության արդյունքները- կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

9. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

9.1 Հաշվետվություն 2001թ. մայիսի 21-ից հունիսի 29-ը Վաշինգտոնում /ԱՄՆ/ կազմակերպված “Զբաղվածության և գործազրկության գնահատում” ուսումնական դասընթացին մասնակցության վերաբերյալ

/Ներկայացնող՝ Ա. Հայրապետյան/

9.2 Հաշվետվություն 2001թ հուլիսի 16-ից օգոստոսի 3-ը ԱՄՆ-ի Առևտրի դեպարտամենտի Հաշվառումների բյուրոյի միջազգային ծրագրերի կենտրոնի կողմից կազմակերպված “Նոր հազարամյակում տվյալների տարածման արդյունավետ համակարգեր” թեմայով դասընթացի վերաբերյալ

/Ներկայացնող՝ Թ. Առաքելովա, Ա. Գյուլբենկյան/

Որոշեցին՝

բոլոր հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի
գիտություն:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

10. Այլ հարցեր

Նախագահ

Քարտուղար

Ս. Մնացականյան

Ա. Հարությունյան